ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արամ Մանուկյանի, Լևոն Ջուրաբյանի, Ստեփան Դեմիրճյանի և Գագիկ Ջհանգիրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-963-15.03.2016-ՊԻ-010/0) վերաբերյալ:

1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 7-րդ կետով, որի համաձայն՝ ներկայացված հայտարարագրերում եկամուտների և հայտարարագրված գույքի ու ունեցվածքի ակնհայտ անհամապատասխանության կամ անհամապատասխանության մասին ողջամիտ կասկածի դեպքում էթիկայի հանձնաժողովն

իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, հիմնարկից, կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր, ինչպես նաև իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից, բացառությամբ դատարանների, պահանջելու և ստանալու քննարկվող հարցի ուսումնասիրության ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ բացատրություններ, անցկացնելու ստուգումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական հետազոտություններ և ներկայացնելու դրանց արդյունքները:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ օրենքի դրույթներով արդեն իսկ կարգավորվում են օրենքի նախագծով ներկայացված հարաբերությունները, մասնավորապես, 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն էթիկայի հանձնաժողովն իրավունք ունի ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր, ինչպես նաև իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից, բացառությամբ սահմանադրական դատարանի անդամների, դատարանների, դատավորների և դատախազների, պահանջելու բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցի ուսումնասիրության ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ անցկացնելու ստուգումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական հետազոտություններ և ներկայացնելու դրանց արդյունքները: Այսինքն՝ օրենքի նախագծով նախատեսվում է սահմանել հանձնաժողովի իրավունքների առավել

նեղ շրջանակ՝ իրավունքը պայմանավորելով ներկայացրած հայտարարագրերում եկամուտների ու հայտարարագրված գույքի և ունեցվածքի ակնհայտ անհամապատասխանության կամ անհամապատասխանության մասին ողջամիտ կասկած ունենալու հանգամանքով:

Բացի դրանից, նախատեսված լրացման արդյունքում կարող է հակասություն առաջանալ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ և օրենքի նախագծով լրացվող 7-րդ մասերի միջև, քանի որ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով բացառություն է նախատեսված ոչ միայն դատարանների այլ նաև սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների մասով:

Անդրադառնալով օրենքի նախագծի 1-ին հոդվածում տեղ գտած «ունեցվածքի ակնհայտ անհամապատասխանություն կամ անհամապատասխանության մասին ողջամիտ կասկած» ձևակերպմանը՝ հարկ ենք համարում նշել, որ այն խնդրահարույց է իրավական կանխատեսելիության և որոշակիության տեսանկյունից: Բացի դրանից՝ «ներկայացրած հայտարարագրերում եկամուտների և հայտարարագրված գույքի ու ունեցվածքի ակնհայտ անհամապատասխանություն կամ անհամապատասխանության մասին ողջամիտ կասկած» ձևակերպումից հստակ չէ՝ խոսքը վերաբերում է հայտարարագրված գույքի (այդ թվում՝ դրամական միջոցների) և եկամուտների միջև անհամապատասխանություններին, թե՝ գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագրում ներկայացված տվյալների՝ իրականությանը չհամապատասխանելուն: Այս առումով, հարկ է նկատի ունենալ այն, որ ոլորտային եզրութաբանության մեջ գործածվում է «արժանահավատության ստուգումը» արտահայտությունը, որը հիմնվում է հայտարարագրված տվյալների՝ պետական մարմինների տեղեկատվական համակարգերում առկա կամ այլ տվյալների հետ համադրման վրա: Մինչդեռ հայտարարագրերում արտացոլված տվյալների «անհամապատասխանությունները» վեր են հանվում հայտարարագրերի

վերլուծության գործընթացում՝ տարբեր ռիսկային չափորոշիչների և գործիքների հիման վրա՝ ի հայտ բերելով մուտքային և ելքային հոսքերի տարբերությունները:

2. Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է օրենքի 44-րդ հոդվածը լրացնել 5.1-ին մասով, որի համաձայն Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, իր ուսումնասիրությունների արդյունքում կամ այլ անձանցից և կազմակերպություններից (այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակումներից) ստացած բարաստիճան պաշտոնատար անձի և նրան փոխկապակցված անձանց ներկայացրած հայտարարագրերում եկամուտների ու հայտարարագրված գույքի և ունեցվածքի առնվազն նվազագույն աշխատավարձի տասը հազարապատիկի չափով անհամատասխանության մասին տեղեկությունները կամ այդ տեղեկությունների վերաբերյալ լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքներն ուղարկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին՝ դրանց ընթացքն օրենքով սահմանված կարգով լուծելու համար: Մինչդեռ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորմամբ՝ հանձնաժողովը նյութերն ուղարկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն՝ միայն այն դեպքում, երբ առկա են ուսումնասիրության արդյունքներում ի հայտ եկած հանցագործության հատկանիշներ:

Այս առումով հարկ է նշել, որ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն, քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որը պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված հանցագործության, մասնավորապես, պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ

մտցնելու, կեղծելու, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելու կամ հանձնելու հատկանիշների առկայությամբ պայմանավորված՝ նյութերը Հայաստանի Հանրապետության դատախազություն ուղարկելուն:

Շարադրվածից հետևում է, որ հանձնաժողովի կողմից նյութերը Հայաստանի Հանրապետության դատախազություն ուղարկելը պետք է պայմանավորված լինի զուտ հանցագործության հատկանիշների առկայությամբ, և ոչ թե ներկայացված հայտարարագրերում եկամուտների ու հայտարարագրված գույքի և ունեցվածքի միջև աշխատավարձի տասը հազարապատիկի չափով անհամապատասխանությամբ:

Ինչ վերաբերում է օրենքի նախագծի հիմնավորմամբ բարձրացված այն հարցին, որ հանձնաժողովը չունի ուսումնասիրություններ անցկացնելու, դրանց արդյունքում անհամապատասխանությունները հաստատելու կամ հերքելու դեպքում իրավասու մարմիններին դիմելու լիազորություն, ինչպես նաև իր կողմից հայտարարագրված գույքի և եկամուտների անհամապատասխանության կամ պաշտոնատար անձի կողմից սխալ տվյալներ ներկայացնելու դեպքում իրավական ներգործության միջոցներ ձեռնարկելու լիազորություն, հայտնում ենք, որ օրենքի նախագծով սահմանված գործառույթների իրականացման համար Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը դեռևս անհրաժեշտ գործիքակազմ չունի: Այս խնդիրը լուծելու և հանձնաժողովի բնականոն գործունեությունն ու ֆինանսական, գործառութային և կառուցվածքային անկախությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի մայիսի 27-ի «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N 447-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը քննարկում է հանձնաժողովին անհրաժեշտ տարածքային պայմանների, կադրային ներուժի և ֆինանսական միջոցների վերաբերյալ փաստաթղթերը:

Միաժամանակ, ունենալով հայտարարագրման ռեեստրների վարման գործառույթ, հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ օժտված չէ հայտարարագրման կարգի խախտման դեպքերում ներգործություն կիրառելու որևէ լիազորությամբ, մասնավորապես, հանձնաժողովը հայտարարագրման կարգը խախտող բարձրաստիճան պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու հնարավորություն չունի: Այս խնդրի լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնցով պատասխանատվություն է նախատեսվում պաշտոնատար անձանց կողմից գույքի, եկամուտների, փոխկապակցված անձանց, ինչպես նաև փոխկապակցված անձի գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագրեր հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում չներկայացնելու, կամ հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների, կամ հայտարարագիրը՝ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու, կամ հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական կամ կեղծ տվյալ ներկայացնելու, կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար և նշված իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժեր նշանակելու լիազորությունը վերապահվել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին: Այս օրենսդրական նախագծերի փաթեթն առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

Հարկ է նաև նշել, որ օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումն առաջնային նպատակ է հռչակված նաև Հայաստանի Հանրապետության կառա-

վարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությամբ: Համաձայն հակակոռուպցիոն ռազմավարության՝ օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորման կարևոր նախադրյալներից է հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման (ֆինանսական բացահայտման) համակարգի բարելավումը, որի իրականացման միջոցառումներն ընդգրկում են ակտիվների ու շահերի հայտարարագրման գործընթացի վերանայումն ու օպտիմալացումը՝ ընդլայնելով հայտարարագրման ենթակա տվյալների ցանկն ու հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց շրջանակը, որոշակիացնելով փոխկապակցված անձանց և ընտանիքի կազմին վերաբերող տվյալների շրջանակը, հստակեցնելով հայտարարագրման կարգն ու ժամկետները, հայտարարագրման գործընթացի կանոնների կատարման մշակումը և ներդնումը՝ ներառյալ այդ կանոնների պահանջները չկատարելու համար իրավական ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն ընթացակարգերը, ինչպես նաև հայտարարագրման գործընթացի թափանցիկության ու մատչելիության բարձրացումը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրելով ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը:

Ուստի, հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրով նախատեսված է «Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորում» բաժինը, որով նախատեսված զգալի թվով միջոցառումներ ուղղված են հանձնաժողովի գործիքակազմի ամրապնդմանը, հայտարարագրման ինստիտուտի կատարելագործմանը: Մասնավորապես, Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի 11-րդ կետով նախատեսված է «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնա-

ժողովին ռեսուրսներով համալրման ապահովում» միջոցառումը, որի իրականացման 2016 թվականի արդյունք է նախատեսված հանձնաժողովի՝ ինքնուրույն աշխատակազմի և բյուջետային ֆինանսավորման առկայությունը: Միաժամանակ, Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի 16-րդ կետով սահմանվել է «Հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների և շահերի հայտարարագրման (ֆինանսական բացահայտման) համակարգի բարելավում», 14-րդ կետով՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում և ընդունում», իսկ 17-րդ կետով՝ «Հայտարարագրման գործընթացի թափանցիկության ու մատչելիության բարձրացում՝ օրենքում ամրագրելով ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը» միջոցառումները: Ընդ որում, Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի 14-րդ կետով նախատեսված միջոցառման 2017 թվականի արդյունքում նախատեսվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին և հանրային ծառայության առանձին ոլորտներում մասնագիտացված կառույցներին վարքագծի կանոնագրքերի պահանջների՝ ներառյալ շահերի բախման կանոնների, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների խախտում թույլ տված հանրային ծառայողների և պաշտոնատար անձանց նկատմամբ իրավական ներգործության միջոցներ կիրառելու վերաբերյալ իրավասու անձանց կամ մարմիններին առաջարկություններ ներկայացնելու իրավասության վերապահում, իսկ վարքագծի կանոնագրքերի պահանջների, ներառյալ շահերի բախման կանոնների, անհամատեղելի գործունեության և այլ խախտումների համար պատասխանատվության սահմանում: Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված այս միջոցառումների արդյունավետ

իրականացման նպատակով ներկայումս պատասխանատու պետական մարմինների կողմից իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություն, որի արդյունքում կմշակվեն նշված նպատակների իրականացման համար առավել արդյունավետ ուղիներ: Իսկ այս ոլորտում առկա խնդիրների հապճեպ լուծման միջոցառումների իրականացումը նպատակահարմար չէ, քանի որ օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումը բարդ գործընթաց է, և դրա համար հարկավոր է ոլորտում առկա խնդիրների բազմակողմանի և հետևողական վերլուծություն:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է և դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն
«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *նախատեսվում է ավելացնել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի լիազորությունները և հնարավորություն ընձեռել հայտարարագրված ունեցվածքի ու եկամուտների միջև էական անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ:*

Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է ավելացնել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի լիազորությունները և հնարավորություն ընձեռել հայտարարագրված ունեցվածքի ու եկամուտների միջև էական անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ և դրանք հաստատվելու դեպքում դիմել իրավասու պետական մարմիններին:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ընդունվելու դեպքում ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնի:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-963-15.03.2016-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43 րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 7-րդ կետով, ա եւ բ ենթակետերով՝ հետեւյալ բովանդակությամբ

«7) Ներկայացրած հայտարարգրերում եկամուտների եւ հայտարարագրված գույքի ու ունեցվածքի ակնհայտ անհամապատասխանության կամ անհամապատասխանության մասին ողջամիտ կասկածի դեպքում էթկայի հանձնաժողովը իրավունք ունի.

ա) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, հիմնարկից, կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել եւ ստանալ քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր.

բ) իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից, բացառությամբ դատարանների, պահանջել եւ ստանալ քննարկվող հարցի ուսումնասիրության ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ բացատրություններ, անցկացնել ստուգումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական հետազոտություններ եւ ներկայացնել դրանց արդյունքները:»:

Հոդված 2. Օրենքի 44-րդ հոդվածը լրացնել 5.1-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ

«5.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը, իր ուսումնասիրությունների արդյունքում կամ այլ անձանցից եւ կազմակերպություններից (այդ թվում ԶԼՄ հրապարակումներից) ստացած բարձրաստիճան պաշտոնատար անձի եւ նրան փոխկապակցված անձանց ներկայացրած հայտարարգրերում եկամուտների եւ հայտարարագրված գույքի ու ունեցվածքի առնվազն նվազագույն աշխատավարձի տասը հազարապատիկի չափով անհամապատասխանության մասին տեղեկությունները կամ այդ տեղեկությունների վերաբերյալ լրացուցիչ ուսումնասիրություններով՝ արդյունքները ուղարկում է ՀՀ գլխավոր դատախազին՝ դրանց ընթացքը օրենքով սահմանված կարգով լուծելու համար:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում առկա պետական կոռուպցիան վաղուց դարձել է ազգային անվտանգության խնդիր: Այն հանգեցրել է պետական կառույցների այլասերմանն ու գործառույթների նենգափոխմանը, բնակչության սոցիալական եւ իրավական անպաշտպանությանը, անկախ պետականության գաղափարի արժեզրկմանը, արտագաղթի եւ այլ չարիքների: Համաձայն «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության 2016թ. հրապարակած կոռուպցիայի համաշխարհային վարկանիշային աղյուսակի՝ 176 երկրների մեջ Հայաստանը 96-րդ տեղում է, իսկ օրինակ մեր հարեւան Վրաստանը՝ 56-րդ:

2011թ. հունիսից ընդունված «Հանրային Ծառայության Մասին» ՀՀ օրենքը եւ 2012 թվականին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կազմավորումը միտված էր հենց Պետական բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կոռուպցիան սահմանափակելու եւ կանխելու խնդրին: Հանձնաժողովը ստեղծել է տվյալների շտեմարան, օրենքով սահմանված կարգով հայտարարագրել եւ հրապարակել է տեղեկություններ պաշտոնատար անձանց գույքի եւ եկամուտների մասին, հանդես եկել զեկույցներով, սակայն, չունի ուսումնասիրություններ անցկացնելու, դրանց արդյունքում այդ անհամապատասխանությունները հաստատելու կամ հերքելու դեպքում իրավասու մարմիններին դիմելու լիազորություն եւ սահմանափակված է տվյալները միայն արձանագրելու եւ հրապարակելու գործառույթներով: Հանձնաժողովը չունի հնարավորություն իրավական ներգործության միջոցներ ձեռնարկել անգամ հանձնաժողովի կողմից հայտարարագրված գույքի եւ եկամուտների անհամապատասխանության կամ պաշտոնատար անձի կողմից սխալ տվյալներ ներկայացնելու դեպքում:

Հանձնաժողովին, որպես կոռուպցիայի դեմ պայքարի մարմին, գույքի, եկամուտների հայտարարագրերը արձանագրելուց բացի օրենքով ավելի լայն լիազորություններ տալու հասունացած անհրաժեշտության մասին հրապարակային հայտարարություններով եւ առաջարկություններով հանդես են եկել էթիկայի հանձնաժողովի նախագահը, միջազգային այլ կառույցների ներկայացուցիչներ:

2. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Առաջարկում ենք «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ, որոնք կավելացնեն Էթիկայի հանձնաժողովի լիազորությունները, հնարավորություններ կընձեռնեն հայտարարգրված ունեցվածքի եւ եկամուտների միջեւ էական անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ եւ դրանք հաստատվելու դեպքում դիմել իրավասու պետական մարմիններին: